Արտաշատի ջրանցքը *կառուցվել է 1930 թվականին։ Սկիզբ է առնում Հրազդան գետի ձախ ափից՝ Երեւանի տարածքում, ունի 61 կմ երկարություն (Երեւանի տարածքում՝ 4 կմ) եւ ոռոգում է մոտ 20 000 հա հողատարածք։ Ջրանցքը վերջանում է միանալով Վեդի գետին։ Վեդի գետն ու իր Քարաղբյուր, Շաղափ վտակներն ունեն տեղական ոռոգիչ նշանակություն։ Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Միսյանի, Ազատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արազափի խոշոր ջրհան կայանները[3]։*

Ջրանցքի մի մասը կառուցվել է 1932 թ.-ին, ավարտվել 1940 թ.-ին։ Ջրի ծախսը սկզբնամասում՝ 16մ³/վ։ Մինչեւ 1968 թվականը ջրանցքը սնվում էր Հրազդան, Ազատ, Վեդի գետերի ջրերից։ Միսյանի ջրհան կայանի կառուցումից հետո լրացուցիչ սնվում է Մեծամոր գետի եւ Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերից։ Ոռոգում է Երեւանի մերձքաղաքային, Արարատի մարզի հողատարածքները[1]։